ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<25 >> սեպտեմբեր 2015թ N 81

Ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ <<ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 2-րդ մասով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի է) ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Անահիտ Կարապետյանի հետ կնքած 2012 թվականի սեպտեմբերի 25-ի N 217 աշխատանքային պայմանագրի 5.1 կետի ա) ենթակետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Լուծել Անահիտ Կարապետյանի հետ կնքած 2012 թվականի սեպտեմբերի 25-ի N217 աշխատանքային պայմանագիրը:
2. 2015 թվականի սեպտեմբերի 25-ից «Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Անահիտ Կարապետյանին, նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից գրաղեցնելը :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ